Շիրակի մարզի Պեմզաշենի միջնակարգ դպրոց

ՊՈԱԿ

«Հմուտ ձեռքեր» խմբակի

2023 – 2024 ուս. տարվա ծրագիր

Խմբակի ղեկավար՝ Բավական Մխիթարյան

V-VII դաս.

Scanned by TapScanner

«ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

1. Թեմայի անվանում, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

Scanned by TapScanner

«ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

(շաբաթական՝ 1 ժամ, տարեկան 34 ժամ)

Աշխատանք բնական և արհեստական նյութերով (10 ժամ)
Նպատակը
• Դաստիարակել գեղագիտական և բարոյական ճաշակ: • Ինքնուրույն աշխատելու և ստեղծելու կարողունակություն: • Գույների ընտրություն և գեղարվեստական ճաշակի զարգացում:
Խնդիրներ
• Ծանոթացնել դեկորատիվ- կիրառական արվեստի ծագումնաբանությանը կապված մարդկային պատմության արշալույսի հետ: • Սովորեցնել մաքուր աշխատել, պահպանել անվտանգության կանոնները:
Վերջնարդյունքներ
. Կիմանան և կտարբերեն նյութերը մշակելու և դրանցով աշխատելու հնարները . Կիմանան և կգնահատեն բնական ռեսուրսները . Կճանաչեն և կարժևորեն իրենց ազգային մշակույթը
Բովանդակություն
. Բնական և արհեստական նյութերով պատրաստել ապլիկացիաներ, խճանկարներ (2 ժամ) . Մանածագործական նյութերով աշխատանք (4 ժամ) .Աշխատանք թղթով և ստվարաթղթով (4 ժամ) . Օրիգամի

Scanned by TapScanner

Հելունագործություն (10 ժամ)
Նպատակը
. Ծանոթացնել հելունագործության գործընթացին . Կատարել էքսիզներ . Կատարել թելերի և գործիքների ընտրություն
Խնդիրներ
• Կկարողանան տարբերել թելերի տեսակները և ամրությունը: • Սովորողները կծանոթանան հելունագործության մեջ օգտագործվող գործիքներին: .Կզարգացնեն զարդանախշը փոխադրելու, պարզ նախշեր ասեղնագործելու կարողունակություններ
Վերջնարդյունքներ
. Կդրսևորեն աշխատանքային հմտություններ, կկարողանան հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր հելուներ, գործիքներ և նյութեր . Կկարողանան գեղարվեստական աշխատանքներ կատարել . Կնպաստեն առանցքային կոմպետենցիաների զարգացմանը
Բովանդակություն
. Գործել բռնիչներ (2 ժամ) . Գործել գրչամաններ (2 ժամ) . Գործել ասեղամաներ (2 ժամ) . Գործել մանկական այլ իրեր (4 ժամ)

Scanned by TapScanner

Շյուղագործություն (10 ժամ)
Նպատակը
• Ծանոթացնել շյուղագործության գործընթացին • Կատարել թելերի, շյուղերի ընտրություն
Խնդիրներ
. Ծանոթանան ազգային զարդանախշերին • Ծանոթանան նոր գործիքներին և դրանց հատկությունների մասին • Կտարբերեն բնական և արհեստական թելերը
Վերջնարդյունքներ
. Կդրսևորեն աշխատանքային հմտություններ . Կկարողանան հմուտ և անվտանգ օգտագործել սարքերի գործիքներ . Կկարողանան գործել տարբեր տեսակի առարկաներ
Բովանդակություն
. Գործել թաթմաններ (2 ժամ) . Գործել գուլպաներ (4 ժամ) . Գործել այլ իրեր (4 ժամ)

Scanned by TapScanner

Աշխատանք գործող մեքենայով (4 ժամ)
Նպատակը
• Ներկայացնել գործող մեքենան, հաղորդել տեղեկություն մեքենայի հետ անվտանգ աշխատելու ձևերը • Սովորեցնել գործող մեքենայով գործելու կանոնները . Կատարել թելերի ճիշտ ընտրություն
Խնդիրներ
. Սովորեղները կծանոթանան ինչպես օգտագործել գործող մեքենան • Կծանոթանան գործող մեքենայի աշխատանքին, հմտություններին • Կզարգացնեն մեքենայով զարդանախշեր ստեղծելու հնարները
Վերջնարդյունքներ
. Ճիշտ և անվատանգ օգտագործել գործող մեքենան . Կարողանան գործել ժիլետներ, գիտրիներ, գլխաշորեր, գլխարկներ . Կկարողանան պատրաստի արտադրանքը(գլխաշոր, գիտրի, գլխարկ) վաճառել և ստացած եկամուտը ներդնել խմբակի համար թելեր, շյուղեր, հելուներ գնելու համար
Բովանդակություն
. Գործել գլխաշոր և գլխարկ (2 ժամ) . Գործել գիտրիներ (1 ժամ) . Գործել ժիլետներ (1 ժամ)

Scanned by TapScanner